ԱՇՈՏ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅ-ՀՈՒՆԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1992-2000 ԹԹ.

ԽՍՀՄ կազմալուծման հետևանքով ինքնիշխանություն ձեռք բերած Հայաստանի Հանրապետությունը թևակոխեց նոր շուկայական տնտեսության համակարգ: Արտաքին տնտեսական հարաբերությունների հաստատումը ինչպես նորաստեղծ, այնպես էլ զարգացած Եվրոպական պետությունների հետ առաջնային խնդիր էր ՀՀ-ի առջև՝ խզված տնտեսական կապերի ծանր հետևանքները փոխհատուցելու ճանապարհին: Առևտրատնտեսական աշխույժ հարաբերությունների սկզբնավորումը եվրոպական պետություններից Հունաստանի հետ պայմանավորված էր անցյալի և ներկայի բարեկամական ավանդույթով և փոխադարձ շահերի գիտակցմամբ: Հայաստանի իշխանությունները՝ ձգտելով արագացնել երկրի տնտեսության համապատասխանեցումը եվրոպական չափանիշներին, նախաձեռնեցին արմատական տնտեսական փոփոխությունների ծրագրեր: Այդ գործընթացում առկա էին բազում խոչընդոտներ՝ ներքին և արտաքին (1988թ. ավերիչ երկրաշարժը, շրջափակումը, ԼՂ կոնֆլիկտը), որի հետևանքով երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակը կտրուկ վատթարացավ, դրանից բխող հետևանքներով հանդերձ (արտագաղթ, չքավորություն և այլն): Ստեղծված իրավիճակում Հունաստանը Եվրամիության միակ երկիրն էր, որը ՀՀ-ին հումանիտար օգնության ցուցաբերելու հետ միաժամանակ, ձևավորում է այդքան անհրաժեշտ իրավապայմանագրային դաշտը երկկողմ տնտեսական հարաբերություններում: Հայ-հունական առևտրատնտեսական հարաբերություններին առնչվող խնդիրները քննարկման առարկա են դարձել երկկողմ տարաբնույթ հանդիպումների և բանակցությունների ժամանակ, ինչպես կառավարական, այնպես էլ՝ հասարակական (գործարարների) մակարդակով:

Հայ-հունական արդի համագործակցությունը կառուցված է ոչ միայն ռազմակաքաղաքական, այլև մեծմասամբ առևտրատնտեսական կապերի վրա: Հայաստանը և Հունաստանը տիրապետում են սակավ բնական ռեսուրսների, և

եթե երկկողմ հարաբերություններում առաջնորդվեն միայն քաղաքական շահերով, որոնք հեռու են տնտեսական օգուտից, ապա դա բացասական անդրադարձ կունենա՝ հանգեցնելով երկրների միջև հարաբերությունների սառեցմանը:

Հայ-հունական առևտրատնտեսական համագործակցությունը գտնվում է փոխշահավետ մակարդակի վրա: ՀՀ-ի համար անկախության և շրջափակման դժվար տարիներին Հունաստանի տրամադրած հումանիտար օգնությանը զուգահեռ, 1992թ. հունվարի 20-ին, դիվանագիտական հարաբերությունների հաստատման հետ միաժամանակ, Աթենքում ստորագրվեց «ՀՀ կառավարության և Հունաստանի Հանրապետության միջև համաձայնագիր, տնտեսության, արդյունաբերության և տեխնիկայի բնագավառում համագործակցության մասին», որը վավերացվել է 1993թ. մարտի 31-ին[1]: Համաձայնագիրը խրախուսում էր հարաբերությունների զարգացումը տնտեսության տարբեր ճյուղերում՝ արդյունաբերություն, գյուղատնտեսություն, զբոսաշրջիկություն, կապ և տրանսպորտ[2]: Վերոհիշյալ բնագավառում երկկողմ տնտեսական համագործակցությանը նպաստելու համար կողմերը պետք է.

- նպաստավոր մթնոլորտ զարգացնեն կապիտալ ներդրումների համար,
- աջակցեն ձեռնարկությունների միջև փորձի փոխանակմանը,
- գործողություններ ծավալեն առևտրի զարգացման նպատակով,
- կազմակերպեն տոնավաճառներ ու ցուցահանդեսներ[3]:

Երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունների հաստատման գործում կարևոր ներդրում էր 1993թ. մայիսի 25-ին Աթենքում կնքված համաձայնագիրը՝ «ՀՀ և Հունաստանի Հանրապետության կառավարությունների միջև կապիտալ ներդրումների պաշտպանության և խրախուսման մասին»[4]: Համաձայնագրում

---

[1] Տես.Տեղեկանք հայ-հունական հարաբերությունների և պայմանագրերի վերաբերյալ. ԱԳՆ ընթացիկ արխիվ, Ե. 2002, էջ 21:
[2] ՀՀ ԱԳՆ գերատեսչական արխիվ, ֆոնդ I, գործ 93, էջ 49:
[3] Տե՛ս նույն տեղում: գ. 206, էջ 10:
[4] Տե՛ս Տեղեկանք հայ-հունական առևտրատնտեսական. հարաբերությունների վերաբերյալ, ՀՀ Առևտրի և Տնտեսական զարգացման նախարարության ընթացիկ արխիվ, Ե., 2002, էջ 1:

ամրագրված է երկկողմ առևտրատնտեսական հարաբերություններում անհրաժեշտ երկու գործոններ.

1. Ներդրումների խթանում և պաշտպանություն (հոդ. 2), որի համաձայն կողմերը կխրախուսեն և կպաշտպանեն մյուս կողմի ներդրողի ներդրումներն իր տարածքում, ինչպես նաև դրանցից ստացված հասույթը[5]:

2. Առավելագույն բարենպաստության և ազգային ռեժիմ (հոդ. 3), որի համաձայն կողմերից և ոչ մեկը մյուս կողմի ներդրողի գործունեության և ներդրումների համար չի ստեղծի պակաս բարենպաստ պայմաներ, քան իր երկրի ներդրողի համար[6]:

Առաջին երկու պայմանագրերը կազմեցին անհրաժեշտ իրավապայմանագրային դաշտը երկկողմ քաղաքակիրթ տնտեսական հարաբերությունների զարգացման գործում:

Հայ-հունական տնտեսական հարաբերություններում ուշադրության կենտրոնում է գտնվում նաև տուրիզմի ոլորտը: Երևույթը բացատրելի է. Հայաստանը իր տնտեսական զարգացման հիմնական ուղղություններից է համարում տուրիզմը, իսկ Հունաստանը միջազգայնորեն ճանաչված տուրիստական կենտրոն է համապատասխան փորձով: Տուրիզմի բնագավառի իրավապայմանագրային դաշտի բացթողումները լրացվեց 1996 թվականի հունիսի 17-ի Աթենքում նախագահների ստորագրած «ՀՀ կառավարության և Հունաստանի կառավարության միջև զբոսաշրջիկության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրով[7]: Տնտեսության ոլորտում փոխադարձ ապրանքաշրջանառության աշխուժացմանն էր ուղղված 1999թ մայիսի 12-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Հունաստանի Հանրապետության միջև եկամուտների և գույքի հարկերի առնչությամբ կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելու ու կանխելու մասին» Կոնվենցիան[8]: Պետք է նշել, որ երկկողմ տնտեսական հարաբերություններում ստեղծած

---

[5] Տես. ՀՀ ԱԳՆ գերատեսչական արխիվ, ֆոնդ I, գործ 207, էջ 63-64:

[6] Տե՛ս նույն տեղում, էջ 64-65:

[7] Տե՛ս Տեղեկանք հայ-հունական առևտրատնտեսական հարաբերությունների վերաբերյալ, ՀՀ Առևտրի և Տնտեսական զարգացման նախարարության ընթացիկ արխիվ, Ե., 2002, էջ 1:

[8] Տե՛ս նույն տեղում:

իրավապայմանագրային դաշտի արդյունքներից առավել հմտորեն է օգտվում Հունաստանը, քանի որ վերջինս տնտեսական զարգացման աստիճանով գերազանցում է Հայաստանին:

Երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունների զարգացմանը նպաստելու ճանապարհին հայ և հույն գործարարները ընտրեցին անմիջական երկկողմ գործնական քայլերի իրագործումը: Հայ գործարարների մի խումբ՝ Գործարարների և արդյունաբերողների միության ու Արդշին բանկի ներկայացուցիչների մասնակցությամբ Աթենք այցելեց 1997 թվականի մարտին[9]: Նպատակը Հայաստան-Հունաստան ապրանքային ներդրումների շրջանակում 10 մլն. ԱՄՆ դոլլար վարկային պայմանագրի ստորագրումն էր[10]: Ըստ Գործարարների և արդյունաբերողների միության նախագահ Ա. Վարդանյանի. «Հունաստանի և Հայաստանի կառավարությունների միջև վաղուց սերտ կապեր են ստեղծվել, բայց տնտեսական մակարդակում համագործակցությունը չէր հաստատվում»[11]: Հանդիպումների ժամանակ պայմանավորվածություն ձեռք բերվեց հայկական շուկայում փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման գործում հունական կապիտալի մասնակցության շուրջը: Մեկ տարի անց Հայաստանում էր գտնվում հույն գործարարների պատվիրակությունը՝ հունական ներդրումների խրախուսման կազմակերպության «Ներո»-ի գործադիր տնօրեն՝ Ցանիս Ցենի գլխավորությամբ, որը հանդիպումներ ունեցավ ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի, Տրանսպորտի նախարարություններում, Արդյունաբերողների միությունում և Հայկական զարգացման գործակալությունում[12]: Երևանյան հանդիպումների արդյունքում ստորագրվեց համագործակցության պայմանագիր «Ներո»-ի և Հայկական զարգացման գործակալության միջև: Նախատեսվում էր բազմակողմ համագործակցություն՝ արտաքին առևտրի բնագավառում, ներդրումային ծրագրերում և հայ ու հույն ձեռնարկությունների միջև գործարար կապեր հաստատելուն[13]: Հունաստանը

---

[9] Տե՛ս «Ազգ» 3/04/1997թ.:
[10] Տե՛ս նույն տեղում:
[11] Տե՛ս նույն տեղում:
[12] Տե՛ս Деловой Экспресс, 14/11/1998.
[13] Տե՛ս նույն տեղում:

ներգրավված լինելով արևմուտքի տնտեսական կառույցներում, գործուն աջակցություն է ցուցաբերում ՀՀ-ի և եվրոպական կառույցների միջև հարաբերությունների աշխուժացմանը: Համաշխարհային բանկի փարիզյան հանդիպման խորհրդատվական խմբի հույն ներկայացուցիչ՝ Դիմիտրիոս Սերելիսը արտահայտելով հունական դիրքորոշումը հայ-հունական տնտեսական հարաբերությունների մասին, նշել է. «Հունաստանը միշտ կարևորել է Հայաստանի հետ ունեցած փոխհարաբերությունները և տարածաշրջանում գերակայություն է տալիս հենց այդ երկրի հետ ունեցած գործընկերությանը»[14]: Անդրադառնալով տնտեսական օգնության ծրագրերին Դիմիտրիս Սերելիսը փաստել է, որ 1995-1999թթ. ընթացքում Հունաստանի օժանդակությունը ՀՀ-ին կազմել է 30.4 մլն. ԱՄՆ դոլլարի վարկ, կան նաև զգալի մասնավոր ներդրումներ[15]: Հունական ներդրումների շարքում, առանձնապես ուշադրության է արժանի Հունաստանի միջազգային առևտրի բանկի հիմնադրումը Հայաստանում, որը երկրորդ խոշոր ներդրողն է Արմենթելից հետո: Հունաստանի միջազգային առևտրի բանկի հայաստանյան դուստր բանկը՝ «Առևտրի զարգացման բանկ-Հայաստանը», իր թիկունքում ունի հզոր հենարան: Բանկի հայաստանյան մասնաճյուղը բացվել է 1999թ-ին, և բաժնետոմսերի 75 տոկոսը պատկանում է մայր բանկին Հունաստանում, իսկ մնացածը՝ Եվրոպական վերակառուցման և զարգացման բանկին, որի ընդհանուր կապիտալը 2001թ. դրությամբ կազմում է 4 մլն. ԱՄՆ դոլլար[16]:

Հայ-հունական առևտրատնտեսական հարաբերությունները համակարգող կառույց է հանդիսանում նաև միջկառավարական հանձնաժողովը: Հանձնաժողովի գործունեությունը նպատակաուղղված է երկկողմ առևտրատնտեսական հարաբերություններում գոյություն ունեցող խնդիրների բացահայտմանը, դրանց լուծման տարբերակների մշակմանը և գործողությունների իրականացմանը: Հայ-հունական միջկառավարական հանձնաժողովի աշխատանքը ընդգրկում է երկկողմ տնտեսական հետաքրքրություն ներկայացնող գրեթե բոլոր բնագավառները: Հայ-հունական միջկառավարական հանձնաժո-

---

[14] Տես «Հայաստանի Հանրապետություն», 19.07.2001թ:
[15] Տես նույն տեղում:
[16] Տես «Ազգ» 23/02/2001թ.

ղովի հանդիպումները գումարվում են հաջորդականության սկզբունքով, երկու երկրների մայրաքաղաքներում: Հերթականը տեղի ունեցավ Աթենքում (1999 թ. մարտին), ուր քննարկվող հարցերի շրջանակը ներառում էր՝ առևտրի, արդյունաբերության, գյուղատնտեսության, էներգետիկայի, տրանսպորտի և զբոսաշրջիկության բնագավառները[17]: Հանձնաժողովի 2002 թ-ին Երևանում գումարված հանդիպումը բավականին ներկայացուցչական էր: Հայկական կողմից հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում էր նաև ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը: Միջկառավարական հանձնաժողովի աշխատանքի արդյունքում քննարկվեցին և լուծումներ ստացան երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցեր՝ վարկերի տրամադրման, բանկային համակարգի, էներգետիկայի, տրանսպորտի, գյուղատնտեսության և տուրիզմի բնագավառներում[18]:

Հայ-հունական առևտրատնտեսական հարաբերությունների գործնական արդյունք կարող ենք համարել կազմավորված բազմաթիվ համատեղ ձեռնարկությունները, որոնց ներգործությունը տնտեսության վրա նշանակալից է հայ հասարակության զգալի մասի համար : ՀՀ տարածքում արդեն 2000թ. հունական կապիտալի մասնակցությամբ գործում էր 19 համատեղ ձեռնարկություն, որոնցից կարելի է նշել. մեծածախ առևտրի բնագավառում՝ «Էլգրեկո», «Դիմիտրիդա», «Էմիլիո», «Օդիսևս», և այլն, շուկայի հասարակական կարծիքի բացահայտման հետազոտություններ՝ «Իտալթել Հելլաս», «Ինքրաքոմ», կապի ոլորտում «Արմենթել» և այլն[19]:

Ամփոփելով վերաշարադրյալը կարևոր ենք համարում ընգծել հայ-հունական առևտրատնտեսական հարաբերություններում կողմերի միջև փոխշահավետ ձեռնարկների բազմազանությունը և դրանց բարենպաստ ներգործությունը միջպետական հարաբերությունների վրա, որոնք անկյունաքար են հանդիսանում նաև համագործակցության զարգացման համար հասարակական կյանքի այլ բնագավառներում:

---

[17] Տե՛ս նույն տեղում, էջ 7:

[18] Տե՛ս Տեղեկանք հայ-հունական առևտրատնտեսական հարաբերությունների վերաբերյալ, ՀՀ Առևտրի և Տնտեսական զարգացման նախարարության ընթացիկ արխիվ, Ե.2002 էջ 12-14:

[19] Տե՛ս նույն տեղում, էջ 2: